ԱԼԱՇԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

Ք. Մ. ՄԱԴԱԹՅԱՆ

Ալաշկերտի բարբառն ունի չորս հոլով՝ ուղղական, տրական, բացառական և գործիական։ Ներգոյականի իմաստն արտահայտվում է անորոշ տրականով և մէճ (մեջ) կապով (օրինակ՝ տան մէճ, ջը՛րի մէճ, հողի մէճ և այլն), ինչպես և ուղղականով՝ այն դեպքում, երբ ներգոյականի իմաստը գրական հայերենում տրվում է տրականով (նըստե տուն գ՛իրկ լը կառտա—տանը նըստած գիրք է կարդում)։ Բացակայում են սեռական և հայցական հոլովները, որոնք նույնացել են ուղղականի ու տրականի հետ։ Ուղղականը ունի զրո վերջավորություն։

Տրական հոլովը կազմվում է ուղղականից՝ հոլովիչների ավելացմամբ։ Վերջադրական հոլովման դեպքում հոլովիչները կարող են ընդունվել որպես տրականի վերջավորություններ, ըստ այդմ էլ տրականը կունենա ի, ու, ա, ան, վա, ոճ *վերջավորությունները։*

Բացառականը կազմվում է ուղղական հոլովից՝ ի, ու, ան *հոլովումների համար, և տրականից՝* ա, օ, վա, ոճ, *և մասամբ* ան *հոլովումների համար։ Բացառականի վերջավորություններն են՝* է, էն, նէ, ի՛ծ, ուծ, ա, ած, *ընդ որում,* ի՛ծ *վերջավորությունը նորամուծություն է, որի գործածությունը կապվում է այլ բարբառների և գրական հայերենի ազդեցության հետ և անընդհատ ընդարձակվում է՝ եզակի թվում ցուցաբերելով մյուս վերջավորություններին փոխարինելու ակնհայտ ընդունակություն։*

Գործիականը կազմվում է ուղղական հոլովից։ Միայն օ *հոլովման (և մասամբ* ան*) բառերի գործիականն է կազմվում տրականից, ինչպես՝ հէր, հօր, հօրով։ Ոճ հոլովման բառերը գործիականում ունեն զուգահեռ ձևեր՝ կազմված ուղղականից և տրականից. տէր, տիրով, տիրօճով։ Գերակշռությունը ուղղականից կազմված ձևերին է պատկանում։*

Թեք հոլովները հոգնակի թվում կազմվում են հոգնակի ուղղականից հետևյալ կերպ. տրականը՝ ու *հոլովիչ-վերջավորությունով, բացառականը՝* էն, ի՛ծ, ուծ, *գործիականը՝* օվ *վերջավորությամբ։ Բացառություն են կազմում* կ, դիկ *մասնիկներով հոգնակի կազմով բառերը, որոնց տրականը ունենում է* ոծ *վերջավորություն։ Այս դեպքում բացառական և գործիական հոլովները կազմվում են հոգնակի տրականից։*

Ալաշկերտի բարբառն ունի ութ հոլովում՝ ի, ու, ա, ան, վա, օ, ոճ *գրաբարակերպ՝ եզակի թվի համար, և* ու, ոծ՝ *հոգնակիի համար։*

Հոլովումը, ըստ հոլովիչների տեղադրման, ունի երկու բնույթ՝ վերջադրական և ներդրական[1]*։ Վերջադրական հոլովման ժամանակ հոլովիչը ավելանում է բառի վերջում։ Վերջադրական հոլովումը գերիշխողն ու հիմնականն է բարբառում։ Ներդրական հոլովման դեպքում հոլովիչ ձայնավորը դրվում է բառի*

---

1 *Ներդրական և վերջադրական տերմինները գործածում ենք պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանի հետևությամբ։*

մեջ, որի հետևանքով տեղի են ունենում բառերի արմատական ձայնավորների փոփոխություններ։

Եթե հոլովումը եզակի թվում բազմազանություններ և բավականաչափ անկայունություններ ունի, որ կտեսնենք հետո, ապա հոգնակի թվում հասել է միօրինակության, գրեթե անբաժան տիրապետություն տալով ու հոլովիչին։ Տրական հոլովում ոծ հոլովիչը հանդես է գալիս սակավաթիվ բառերում, իսկ այդ բառերը կարող են հոլովվել նաև ու հոլովիչով։

Ի ճոլովման բառերը եզակի տրականում ստանում են ի հոլովիչը, հոգնակի տրականում՝ ու: Եզակի բացառականն ունի էն կամ իծ, հոգնակին՝ ուծ, էն վերջավորությունները, գործիականը՝ օվ: Ի հոլովումը վերջադրական բնույթի է։ Ի հոլովման ենթարկվում են.

ա) Ու ձայնավորով վերջացող գոյականների մի մասը լու-լըվի, ձ՛ու-ծ՛վի, հ՛առու-հ՛առվի և այլն, որոնց բառավերջի ու ձայնավորը ի հոլովիչից առաջ դառնում է վ:

բ) Բոլոր անձնանունները. Արուս-Արուսի, Շօղիգ-Շօղիգի, Պօզոս--Պօղօսի, Պէդրօս-Պէդրօսի, Հ՛օվանէս-Հ՛օվանէսի և այլն։

Անձնանունների ի հոլովիչը ձայնավորների մոտ դառնում է յ. Գ՛էվօ-Գ՛էվօյ, Կարօ-Կարօյ, Պէդէ-Պէդէյ և այլն։ Պատճառը հավանաբար այն է, որ շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, չի անցնում ի հոլովիչին և վերջինս թույլ է արտասանվում ու փոխարկվում յ-ի։

գ) Ուտեն, իկ, ագ, անկ, ածու, արան, իճ, ոստ, վոր, ոծ ածանցներով վերջավորվող բառերը. հ՛ընգէրուտեն-հ՛ընղէրուտէնի, լավուտեն-լավուտէնի, դ՛ըռնագ-դ՛ըռնըգի, սօղնագ-սօղնըղի, ուղէլիկ-ուղէլիկի, սէրմածու-սէրմածուի, ճաշարան-ճաշարանի, ձ՛էվիճ-ձ՛էվիճի, ճամպոստ-ճամպօստի, քաղվոր-քաղվօրի, դ՛առպընոծ-դ՛առպընօծի (բացառություն են կազմում մի քանի բառեր)։

դ) Ա ձայնավորով վերջացող բառերը. թալվա-թալվի, գ՛ատա-դ՛ատի, շուրվա-շուրվի, քէճա-քէճի։ Այսպիսի բառերի հոլովման ժամանակ վերջահանգ ա ձայնավորը դուրս է ընկնում։

ե) Նորագույն փոխառությունները՝ կատարված ռուսերենից և արդի գրական հայերենից (բացառությամբ ի-ով վերջացողների). կօլխօզ-կօլխօզի, տրակտօր-տրակտօրի, բրիգադիր-բրիգադիրի։

զ) Մարմնի մասերի անուններից հետևյալները. քիթ, բ՛էրան, մէճկ, անգաչ, մադ, ըղունգ, լինդ, սիռդ, թոկ, պլօշիգ, աղիկ, գօշ, մազ, վիզ, չօկ, բօդ, ագռա, լեզու։

է) Գոյականաբար գործածվող ածականները, թվականները, ենթակայական, հարակատար դերբայները. լավ-լավի, մէդ-մէգի, աշխադօղ-աշխադօղի, տեսուգ-տեսուգի։

ը) Բազմաթիվ գոյականներ, որոնք ըստ վերջավորությունների, ածանցների և այլ հատկանիշների չեն խմբավորվում. քար, հող, առդ, ջ՛ուր, ամբ, ցան, տառտ, ջըվալ, պուլիդ, թեռ, թել, զրնջիլ, փոգ, հըրօր, աման, կարաս, թառ, կուժ, կուբըր, սինձ, ցօրեն, խօդ, ծառ, սէլ, կանանճ և այլն։

Ու ճոլովման բառերի տրականը ստանում է ու հոլովիչ թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում։ Բացառականի վերջավորություններն են ուծ, էն, գործիականինը՝ օվ: Ու հոլովումը վերջադրական բնույթ ունի։ Ու հոլովման ենթարկվում են.

ա) Ու ձայնավորով վերջացող բառերից երկուսը. կադու-կադվու, բ՛ուբ՛ըվու։

բ) Ա ձայնավորով վերջացող մի բառ. ճամպա-ճամպու։

գ) Ի ձայնավորով վերջացող բառերը, բացի ժամանակ ցույց տվողներից, որոնք ենթարկվում են վա հոլովման գ՛արի-գ՛արու, հօկի-հօկու, կաշի-կաշու, փուշի-փուշու, ջ՛օրի-ջ՛օրու։ Այս և նման բառերի ի-ն թեք հոլովներում դուրս է ընկնում։

դ) Ճի, էծի, ածի, ծի ածանցներով վերջացող բառերը. դհոլճի-դհոլճու, ղուռնաճի-ղուռնաճու, կառպէծի-կառպէծու, հ՛էրէվընծի-հ՛էրէվընծու, դ՛էղածի-դ՛էղածու։

ե) Մարմնի մասերի անուններից երկուսը. գ՛ըլուխ-գ՛ըլխու, փոր-փորու։

զ) Կենդանիների ու թռչունների անունները. գ՛էլ-գ՛իլու, գ՛առ-դ՛առու, կով-կովու, լոր-լորու, ճընչուղ-ճընչըղու և այլն։ Բացառություն են կազմում նղ, օճխար, վադրը, առյուծ, ցուրուր, շուն բառերը։

է) Չդասդասվող մի խումբ բառեր. մառտ, ժամ, լուս, ճիժ, գ՛ոմ, դ՛ուս, սուրսլ, աստվաձ, ծուռ, քուն, ձ՛որ, հոր, ծով, պառավ, մուխ, ամօտ, համ, հոդ, յերդինկ, էտում, արէվ, քուռսի և այլն։

Ամիս, տարի, մուտ, ջ՛ուր, կարօդ բառերը թեև կարող են ստանալ ու հոլովիչ, բայց ավելի շուտ հոլովվում են այլ հոլովիչներով. տարի, ամիս՝ վա հոլովիչով, մուտ՝ ան հոլովիչով, կարօդ, ջ՛ուր՝ ի հոլովիչով։

ը) Գոյականաբար գործածվող անորոշ դերբայները. գ՛ալ-գ՛ալու, տալ-տալու, առնել-առնելու, էրտալ-էրտըլու, հասնել-հասնելու և այլն։

թ) Բնության երևույթների անուններից հետևյալները. ցուռդ-ցըռղու, շոկ-շօկու, անձրև-անձրըէվու, քամի-քամու։

ժա) Տեղանունները ենթարկվում են ա հոլովման[2], բայց պատահում է նրանց գործածությունը նաև ու հոլովիչով. Արարան-Աբարանու, Ալագյազ-Ալագյազու, Թավրէզ-Թավրէզու և այլն։

Գոյականները հոգնակի թվում հոլովվում են ու հոլովիչով։

Հոգնակիում ու հոլովման չեն ենթարկվում միայն այն բառերը, որոնք ունեն կ, դիկ հոգնակիակերտ մասնիկները։ Սրանց հոլովիչը կլինի ոծ:

Օրինակ՝ ուղղ. սանէրդիկ	բաց. սանէրդոծէն, իծ
տր. սանէրդօծ	գործ. սանէրդօծօվ

Բայց նման բառերը թեք հոլովներում ավելի շուտ գործածվում են եր, ներ մասնիկները ևս ստանալուց հետո։ Այս դեպքում արդեն ենթարկվում են ու հոլովման։

Այսպես՝ ուղղ. սանէրդիկ	բաց. սանէրդիկնէրուծ
տր. սանէրդիկնէրու	գործ. սանէրդիկնէրօվ։

Սէր բառը պատկանում է ու հոլովման և ունի կանոնավոր հոլովում

ուղղ. սէր	բաց. սիրուծ
տր. սիրու	գործ. սիրօվ

Ա հոլովումն ունի ներգրական և վերջադրական բնույթ։

2 Տեղանունները ա հոլովման են ենթարկվում նաև Ղարաբաղի և մասամբ Մշո բարբառներում։ Տե՛ս Ս. Բաղդասարյան-Թափալչյան, Մշո բարբառը, Երևան, 1958, էջ 89։

Ներգրական հոլովման դեպքում ա հոլովիչը դրվում է բառի ներսում, իսկ տվյալ բառի արմատական ձայնավորը դուրս է ընկնում։ Այս ձևով ստանում ենք տրական հոլովը։ Բացառական հոլովը կազմվում է ուղղականից էն կամ ի-ծ վերջավորությունների կցումով։ Գործիականը՝ դարձյալ ուղղականից և ունի օվ վերջավորություն.

եզակի	հոգնակի
ուղղ. տուն	տներ
տր. տան	տներու
բաց. տընէն, ի-ծ	տընէրուց, էն
գործ. տընօվ	տընէրօվ

Ա ներգրական հոլովման ենթարկվող բառերի թիվը մեծ չէ.

ա) Մի քանի միավանկ բառեր, որոնց արմատական ձայնավորն է ու. տուն-տան, ճ՛ուն-ճ՛ան, շուն-շան, սուն-սան և այլն։

բ) Բազմավանկերից՝ անուն-անվան բառը։

Ա վերջադրական հոլովման են պատկանում այն բառերը, որոնք տրականում ստանում են ա հոլովիչը։

Այս հոլովման բառերի բացառականը նույնն է տրականի հետ[3]. երբեմն տրականի ա-ին ավելանում է ծ։ Հոգնակի տրականն ունի ուծ, էն վերջավորությունները։ Գործիականը կազմվում է ուղղականից օվ մասնիկով։

Այս հոլովման են ենթարկվում.

ա) Որպես բնակավայր հասկացվող տեղանունները՝ գյուղ, քաղաք, շրջան, բացի ի-ով վերջացողներից։ Ալաշկեռդ-Ալաշկեռդա, Աբարան-Աբարանա, Քուճակ-Քուճակա և այլն։

բ) Լեռների և գետերի անունները. Մասիս-Մասիսա, Շողանկատ-Շողանկատա, Արազ-Արազա և այլն։

գ) Ամիսների անունները. Հունվար-Հունվարա, փէդրվար-փէդրվարա և այլն։ Մայիս, Հունիս, Հուլիս ամսանունները ենթարկվում են նաև ի հոլովման մայիս-մայիսա, մայիսի և այլն։

դ) Երկրների անունները, որոնք ունեն ստան ածանցը. Հայաստան-Հայաստանա, Վրաստան-Վրաստանա, Ռուսաստան-Ռուսաստանա, Հընդգաստան-Հընդգաստանա և այլն։

ե) Մի շարք այլ գոյականներ. թունդիր, ախճիգ, կընիգ, փրիգ, սանիդ, ավազան և այլն, որոնց եզակի բացառականն ունի ն վերջավորությունը։

Աղջիկ բառը ա վերջադրական կանոնավոր հոլովման է պատկանում։

Այսպիսով, Ալաշկերտի բարբառին հատուկ չէ աղջիկ և սէր բառերի՝ ժամանակակից գրական հայերենում այլաձև համարված հոլովումը։ Ահա այդ բառի հոլովման պատկերը.

եզակի		հոգնակի	
ուղղ. ախճիգ	բաց. ախճրդած	ախճրգ՛ներ	ախճրգն՛էրուծ
տր. ախճրգա	գործ. ախճրգօվ	ախճրգ՛նէրու	ախճրգ՛նէրօվ

Հոգնակի թիվ չունեն ա, բ, գ, դ կետերում թվարկված բառերը։

---

3 Այսպես է նաև Վանի բարբառում։ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 116։

Ան հոլովման են պատկանում այն բառերը, որոնք տրականում ստանում են ան հոլովիչը։ Ան հոլովումը վերջադրական բնույթի է։

Հոգնակի տրականը կազմվում է հոգնակի ուղղականին ավելացնելով ու։ Բացառականի եզակին ունի էն, ից, իսկ հոգնակին՝ ուց, էն վերջավորությունները։ Գործիականը և՛ եզակի, և՛ հոգնակի թվի համար՝ օվ։ Մի խումբ բառերի բացառականն ու գործիականը կազմվում են տրականից, ուրիշներինը՝ ուղղականից։ Ան հոլովման պատկանում են.

ա) Տարվա եղանակների անուններից. ձ՛ըմեռ-ձ՛ըմռան, ամառ-ամռան (ենթարկվում են նաև վա հոլովման), ամբուվա, ձ՛ըմբուվա։

բ) Գրաբարում բառավերջում ն ունեցող և բարբառում այդ ն-ից զրկված բառերի մեծ մասը. յեղ-յեղան, ասեղ-ասխան, դ՛ուռ-դ՛ըռան, մուգ-մըգան, ձ՛ուգ-ձ՛ըգան, բ՛եռ-բ՛եռան, կամ-կաման և այլն։ Այս կարգի վոդ, ձ՛եռ, գ՛առ, հառս բառերը ան հոլովման չեն ենթարկվում։

գ) Ում-ով վերջացող բառերը. հ՛ուսում-հ՛ուսման, յէռտում-յէռտման, սիլոսածում-սիլոսածման, սոծմըռծում-սոծմըռծման, խոստում-խոստման և այլն։

դ) Մի խումբ այլ բառեր. արուն-արնան, լուձ-լըձան, թումբ-թըմբան, մուտ-մըտան (լինում է նաև՝ մըտնու), խուռծ-խըռծան- հ՛ապ-հ՛ապան (նաև՝ հ՛ապի), խունգ-խընգան և այլն։

Գրաբարում ն-ով վերջացող բառերը Ալաշկերտի բարբառում ան հոլովիչով հոլովվելիս կորցրած ն-ն վերստանում են եզակի թվի բացառական, գործիական և հոգնակի թվի բոլոր հոլովներում. օրինակ՝

եզակի	հոգնակի
ուղղ. դ՛ուռ	դ՛ըռներ
տր. դ՛ըռան	դ՛ըռներու
բաց. դ՛ըռնէն, ից	դ՛ըռներուց, էն
գործ. դ՛ըռնով	դ՛ըռներով։

Վա հոլովման պատկանում են այն բառերը, որոնք տրականում ստանում են վա հոլովիչը։ Բացառական հոլովը կազմվում է տրականից և ունենում է եզակիում ած, նէ, հոգնակիում ուց վերջավորությունները։ Նէ վերջավորություն ունեն ոչ բոլոր բառերը։ Տեղանունները բացառականում կարող են ունենալ ա՝ վերջավորություն, բայց ավելի շուտ՝ ա, որի դեպքում բացառականը չի տարբերվում տրականից։ Տեղանունների բացառականը նէ վերջավորություն չի ունենում։ Գործիականը կազմվում է ուղղականից. վերջավորությունն է օվ։ Վա հոլովման ենթարկվում են.

ա) Ի ձայնավորով վերջացող տեղանունները. Մուլկի-Մուլկըվա, Կառպի-Կառպըվա, Ջանգի-Ջանգըվա, Լոռի-Լոռվա, Փառպի-Փառպըվա և այլն։

բ) Ժամանակ ցույց տվող բառերը. օր-օրվա, կէսօր-կէսօրվա, հ՛իրգուն-հիրգըվա, լուսուն-լուսվա (վաղը), էրգուշապտի-էրգուշապտըվա (տարի, ամիս, շապատ բառերը հոլովվում են նաև ու հոլովիչով)։

գ) Գոյականաբար գործածվող ժամանակի մակբայները. շուտ-շուտվա, հերու-հերվա, հ՛առէճ-հ՛առէճվա։

դ) Վա հոլովման ենթարկվում են նաև մայ-մայվան և կէս բառերը (վերջինս միայն բարդության մեջ). ամիսուկես-ամիսուկիսվա, իսկ առանձին վերցրած ենթարկվում է ու հոլովման՝ կէս-կիսու։

Օ ճոլովման են ենթարկվում հէր, մէր, ախպէր և դրանցով բաղադրված բառերը, ինչպես՝ սանամէր-սանամօր, հօրախպէր-հօրախպօր, քավորհէր-քավորհօր և այլն։ Օ հոլովումը ներդրական բնույթի է։

Տրական հոլովը կազմվում է բառի է ձայնավորի փոխարեն ο ավելացնելով։ Բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականից։ Բացառականը եզակիում ունի ած, էն վերջավորությունները և, ի տարբերություն մյուս հոլովումների, ավելի գործածականը ած վերջավորությունն է։ Հէր, մէր բառերի բացառականը կարող է ունենալ նաև ուծ վերջավորություն (հօրուծ-մօրուծ և նման այլ կապակցություններում)։ Հոգնակի բացառականը ունի ուծ վերջավորություն։ Ախպէր բառը հոգնակի ուղղականում ախպերներ ձևով հանդես գալու կամ տրականում երկրորդ հոգնակիակերտ մասնիկն ստանալու դեպքում հոլովվում է հէր և մէր բառերի հոգնակիի նման, իսկ ախպերդիկ ձևով հոլովվում է նրանցից տարբեր և բացառականում ստանում է էն կամ ած, տրականում ոծ վերջավորությունները։ Գործիականը եզակի և հոգնակի թվերում ունի օվ վերջավորություն։

Ոճ ճոլովման պատկանում են այն բառերը, որոնք եզակի տրականում ստանում են ոճ հոլովիչը։ Բացառական հոլովը կազմվում է տրականից, գործիականը՝ և՛ տրականից, և՛ ուղղականից։ Բացառականի վերջավորություններն են էն, ած, ուծ (վերջինը միայն հոգնակի թվի համար), գործիականինը՝ օվ։

Ոճ հոլովման պատկանող բառերը բոլորն էլ ցույց են տալիս բարեկամական կամ ազգակցական հարաբերություններ, դրանք են. քուր, կիսուր, տէկըր (տէկրոճ և տէկեր), սանէր, անէր, քավոր, տալվ և սրանցով կազմված բառերը։ Տալվ բառի վ-ն դուրս է ընկնում թեք հոլովներում—տալոճ, տալօճիծ... Այսպիսի հարաբերություններ արտահայտող, բայց այս հոլովման տակ չթվարկվող բառերը ենթարկվում են մյուս հոլովներին։

Ոճ հոլովման են ենթարկվում նաև հ՛ընգեր, տէր բառերը, որոնք ցույց են տալիս փոխհարաբերություններ։

Բացի նրանից, որ Ալաշկերտի բարբառում պատահում են գրաբարյան քարացած հոլովական ձևեր (մօրէ մերգ, մօրէ մէգ, Ատամա պուքուզ, մէղած ծօվ, սէրման սոխ, օղօրմի քու ծնօղած, հիշօղած և այլն), ունենք հինգ բառ, որոնք ճոլովվում են ճիշտ և ճիշտ գրաբարի ճոլովման սիստեմով։ Դրանք են՝ աճկ, ձ՛եռ, վոդ, գ՛արուն, աշուն.

եզակի

ուղղ.	աճկ	ձ՛եռ	վոդ	գ՛արուն	աշուն
տր.	աճիճ	ձ՛էռած	օգած	գ՛արնան	աշնան
բաց.	աճկէ	ձ՛էռնէ	օդնէ	գ՛արնանէ	աշնանէ
գործ.	աճկօվ	ձ՛էռօվ	օդօվ	գ՛արնանօվ	աշնանօվ
				(գ՛արնանօծօվ)	(աշնանօծօվ)

Ինչպես երևում է, աճկ բառի տրականը նույնն է գրաբարյան սեռական-տրական աչից ձևի հետ, համաձայն բարբառիս հնչյունական օրենքների, չ-ն դարձել է ճ, իսկ ց-ն՝ ծ-ը, որ առնմանման օրենքով վերածվել է ճ-ի։ Ձ՛էռած, օղած տրականները նույնն են գրաբարյան սեռական-տրականի ձեռաց, ոտաց ձևերի հետ։ Բացառականի ի ձեռանէ, յոտանէ, ի գարնանէ, յաշնանէ հոլովաձևերից ընկել է նախդիրը միայն։ Գործիականում եղած տարբերությունը պի-

ա՛ի վերադրել այն բանին, որ Ալաշկերտի բարբառում օվ վերջավորությունը տարածվել է բոլոր բառերի վրա առանց բացառության՝ ստեղծելով միօրինակություն գործիական հոլովում։ Այս բառերի հոգնակիները ենթարկվում են ու հոլովման։

Դրարարյան հոլովման հետ նմանություններ ունի նաև ամառ, ձմեռ և բարբառում ան հոլովման ենթարկվող մյուս բառերի հոլովումը, որոնք կորցրել են դրաբարի եզակի թվի վերջահանգ ն ձայնորդը։

Հարադիր գոյականները հոլովվում են այնպես, ինչպես ժամանակակից գրական հայերենում։ Հարադրության առաջին մասը մնում է անփոփոխ, իսկ երկրորդը հոլովվում է.

	եզակի	հոգնակի
տր.	տուն ու աէղի	տուն ու տէրան
ուղղ.	տուն ու տեղ	տուն ու տէրանէրու
բաց.	տուն ու տէղիծ, էն	տուն ու տէրանէրուծ
գործ.	տուն ու տէղօվ	տուն ու տէրանէրօվ

Կան դեպքեր էլ, երբ հարադրության երկրորդ մասը հոլովվում է, իսկ առաջինը բացառականում ու գործիականում հանդես է գալիս տրականի ձևով։ Օրինակ.

ուղղ. հէր ու տրղա
տր. հօր ու տրղի
բաց. հօր ու տրղիծ
գործ. հօր ու տրղօվ

Կարող է հոլովվել նաև՝ տուն ու տեղ, տանու տեղի և այլն։ Գծիկով դրվող հարադիրների առաջին բառը երբեք չի հոլովվում. ամառ-չամառ, ամառ-չամանի, ամառ-չամանիծ, ամառ-չամնօվ, կամ՝ տուն-տեղ, տուն-տէղի և այլն։ Այսպիսի հարադրությունների մեջ մտնող բառերը չեն պահպանում իրենց իմաստային ինքնուրույնությունը, երկուսը միասին առնվում են նոր, վերաբերված իմաստով, որով բարդությունը դառնում է ավելի սերտ։

Հոլովական վերջավորությունների տախտակ

Հոլովներ	Հոլովումներ									
	եզակի								հոգնակի	
	ի	ու	ա	ան	վա	օ	ոճ	դրա-բարա-կերպ	ու	ոծ
Ուղղական	—	—	—	—	—	—	—	—	հոգնակի մասնիկ	հոգնակի մասնիկ
Տրական	ի	ու	ա	ան	վա	—	ոճ	ուծ, իճ, ան	ու	ոծ
Բացառական	էն, իծ	ու, ուծ	իծ, ա ուծ, էն	էն, իծ	նէ, ուծ, ա	իծ, էն	իծ, էն	է	ուծ, էն	իծ, էն
Գործիական	օվ	օվ	օվ	օվ	օվ	օվ	օվ	օվ	օվ	օվ

СКЛОНЕНИЕ В АЛАШКЕРТСКОМ ДИАЛЕКТЕ

К. М. МАДАТЯН

Резюме

Склонение в Алашкертском диалекте имеет свои особенности. Прежде всего надо отметить отсутствие винительного и родительного падежей. Винительный падеж совпадает с именительным: *քու էրէխեն տար տուն. էդ յեզրն լրձու* и т. д. Родительный падеж не отличается по морфологическим признакам от дательного падежа.

Склонению единственного числа свойственно многообразие и непостоянство, многие слова подвергаются двум и более склонениям, а склонение множественного числа дошло до единообразия и почти дало полное овладение склонению *«ուն»*.

Система склонения Алашкертского диалекта в основном агглюнативая, но сохранялось флективное склонение для малочисленных слов. Отложительный падеж группы слов, осо бенно названий местностей, похож на дательный, который образовался вследствие выпадения пред лога в отложительном подеже. Название животных, как в древнеармянском языке, подвергаются склонению на *«ուն»*; *գ'էլ — գ'իլու, աղվէս — աղվըսու, կով — կովու* и т. д.

Склонение слов *«աղջիկ»* и *«սեր»* изменено, первое подвергается склонению *«աս»*, второе — *«ուն»*.

Некоторые слова склоняются так, как в древнеармянском языке: *օր-ավուր, աճկ-աճիճ, վոդ-օդած* (древнеармянский *աւր-աւուր, աչք-աչից. ոտն-ոտաց)* и т. д.